ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Ինտերմեդ Գրուպ ՍՊԸ-ն ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/41 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
38	POWERSEAL	Olympus	Առաջադեմ բիպոլյար մկրատ կոագուլացիոն էրգոնոմիկ ատրճանակային բռնակով էնդոսկոպիկ միջամտությունների համար ձեռքի ակտիվացման հնարավորությամբ: Գործիքը ստերիլ է, մեկանգամյա օգտագործման, նախատեսված լապարոսկոպիկ և բաց վիրահատական միջամտությունների համար, ապահովում է մինչև 7 մմ տրամագծով անոթների, ներառյալ թոքային անոթների, հուսալի կոագուլյացիա և հատում՝ ձևավորելով ամուր անոթային «fusion-seal» հերմետիկ շերտ: Միջին կոագուլացիայի ժամանակը չի գերազանցում 3,3 վայրկյանը: Աշխատանքային մասը պատրաստված է բժշկական նշանակության կոռոզիոնակայուն պողպատից՝ էլեկտրամեկուսացված ցողունով, ապահովելով բիպոլյար բարձր հաճախականության (RF) էներգիայի վերահսկվող և ադապտիվ մոդուլացված մատակարարում, նվազագույն լատերալ ջերմային տարածում, ցածր մնացորդային ջերմություն ակտիվացումից հետո և հյուսվածքների կպչունության նվազեցում: Գործիքը ունի կոր և նեղացող դիստալ ծնոտային ծայր՝ բարդ անատոմիական

			գոտիների հասանելիության համար, երկաստիճան (double-action) ծնոտների փակման մեխանիզմ՝ հյուսվածքների հուսալի բռնման և արդյունավետ դիսեկցիայի նպատակով, երկարացված ծնոտներ և հատման գիծ՝ կոագուլյացիայի և հատման արդյունավետության բարձրացման համար: Ցողունի տրամագիծը 5 մմ, ցողունը՝ 35 սմ երկարությամբ՝ լապարոսկոպիկ վրահատություններում կիրառելու համար: Կոնստրուկցիան ապահովում է ցողունի առնվազն 330° սահուն ռոտացիա՝ օպերացիոն դաշտում ճշգրիտ դիրքավորման համար, շրջանաձև (wrap-around) էներգիայի ակտիվացման կոճակ՝ էներգիայի մատակարարման հնարավորությամբ ամբողջությամբ կամ մասնակի փակված ծնոտների պայմաններում, նվազեցված ուժով գործող հատման ակտիվացման մեխանիզմ՝ առանց կտրման ամրության և դիմացկունության նվազեցման, ինչպես նաև օպտիմիզացված սեղմման ուժ ծնոտների փակման ժամանակ՝ պահպանելով անոթների կայուն հերմետիզացիայի համար անհրաժեշտ կոմպրեսիոն ճնշումը: Սարքը ապահովում է ծնոտների latch-on և latch-off ֆիքսացիոն ռեժիմներ՝ վիրաբուժական տեխնիկայի պահանջներին համապատասխան և համատեղելի է կլինիկայում առկա Olympus ընկերության ESG-410 էլեկտրավիրաբուժական գեներատորների հետ և ունի պաշտոնական համատեղելիության փաստաթուղթ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Интермед Груп в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/41 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
38	-	-	-